

այն համարաւոր ամբողջ արձանը, որ է Տէր Անտոնի Տոսկանեան. սա, յս-
 մանց քահանայ կարծուած՝ բայց իւր թոռանէ աշխարհական լինել վկայուած ր,
 այն անձն է՝ որ Վիպլիէնա ամբողջին առման ժամանակ՝ վիրալից՝ ինքզինքը
 ծածուկ մինչեւ վառօդանոցը քարշելով, « Դիւցազնաբար վախճանինք » կ'ըսէ և
 ու բռնկցընելով՝ ամբողջը հանդերձ յարձրկող ու պաշտպանողներովը յօգ կը
 հանէ, յամի 1799, յունիս 13: — Արձանը կը ներկայացընէ զԱնտոն
 ծնկոց վրայ կորած՝ իրանը դէպ ի առջեւ, տկարութենէն ընկնելու և վառ
 խանձող մի նետելու դիրքի մէջ. զուրպաները սրունից թամբի վրայ օղով ու
 ճարմանդով աղիտուած են, վարի մասը կօշկով ծածկուած. շապիկը պատառ
 պատառ, որով կուրծքը, թիկունքն ու թեւերը՝ գրեթէ մերկ. զօրաւոր անձի
 մի մարմին, դէմքն՝ արիասիրտ ծերու, որ ըմբռնած է այն ինչ կատարելիք
 մեծ դիւցազնութիւնը, բայց սակաւ մի այլայլած: Զախ թեւն բարձրացած՝
 գլուխը կը պատէ, այնպէս՝ որ բազուկն ճակատը ծածկելով՝ ձեռքը բռնցի
 աջ ականջին վրայ կը հանգչի. այնու բացատրել ուզելով արուեստաւորն, թէ
 դիւցազն բոլորովին յինքն կեդրոնացած՝ զբաղած է գործը լաւ յաշողցընելու
 մեծ մտածութեամբ. միով բանիւ, բովանդակ մարմնոյն դիրքն ու շարժմանքը՝
 կրակը ձգելու պատրաստ անձի մի տեսիլ կ'ընծայեն: Բայց մեզ կ'երեւի որ
 ֆրանկիսկոս՝ Տուրիէլլոս պատմաբանին յիշած՝ մի մեծ հանգամանքի մտադիր
 չէ եղած, սրով Անտոնի՝ մի քանի զօրաւոր շարժմանք կամ դիրք առած է,
 մինչդեռ վիրալից և գրեթէ ուժասպառ էր. — այլ և այս գիտողութիւնս մի
 կողմէ թողած, հեղինակի այս գործը՝ միշտ արուեստի կարեւոր հրաշակերտ
 մ'է. որ սահմանուած է՝ իբրու հին անցից յիշատակ՝ յիշեալ ամբողջին աւե-
 րակաց վրայ բարձրանալու: Հօս վերջացընենք մենք այլ ֆրանկիսկոսի գործոց
 դրուատիքը, — զոր կրնայինք դեռ շատ յերկարել, եթէ ստիպուած չլինէինք
 ապա՝ իւր աշակերտ և հաւասար փայլող վիճակներու եղբօր վրայ եւս՝ նոյն
 խօսքերը կրկնել. — զանց ընելով յիշել անոր միւս ձեռակերպքը, ինչպէս՝
 Յաղթանակ Գերմանիկոսի, Վիկտա, և այլն:

Շարայարեկի

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ



Նոր գիտութիւն. — Եւրոպական լրագիրք կը հաղորդեն մեզ՝ թէ մօտերս
 Սանդիակոյէ գրեթէ երեք հազարամետր հեռու դէպ ՚ի արեւելեան կողմը նու-
 րանոր գիւտեր եղած են. որոնք յիրաւի մեծ լըյս մի պիտի սփռեն՝ ոպա-
 նիական արշաւանքէ առաջ Ամերիկոյ մէջ գտուած ժողովրդոց գրուածքն մա-
 սին: Նոյն տեղէն գտուեր են շատ և զանազան կահկարասիներ, կաւեղէն
 անօթներ, ապակեղէններ, պտուկներ, որսորդութեան և պատերազմի գէն,

քեր, նաև մի քանի փոսեր՝ 15 ստից մինչև 17 ստից խորութեամբ փորուած : Նմանապէս այդ տեղէն յերեւան եկած են բազմաթիւ մարդկային կմախք, որոնք խառնիխառն զանազան դրից մէջ կեցած կը տեսնուին, ուսկից կը հետեւցընեն հնազէտք՝ թէ հոն քաղաք մի թաղուած ըլլայ՝ ատենօք հրաբրդային զօրութենէ կործանած :

Ճանձի օգտակարութիւնն. — Ճանձն որ ցարդ ֆետակար և անպէտ միշտ մի համարուած էր՝ ներկայիս բնաբանք զննելով իմացան անոր օգտակարութիւնը : Աւէն ուսումնական անձինք գիտեն թէ ո՛րքան անհաւասար փոքրիկ մակարոյծ միջատներ կան օդոյ մէջ վրտացող, որոնք կարգէ դուրս կը բազմանան մանաւանդ ամառնային եղանակայ մէջ : Եւ ահաւասիկ ճանձն այս անտեսանելի միջատներէն մեծ բազմութիւն մը անյազարար կը լափէ. և եթէ ճանձն զանոնք չի ջնջէր՝ այդ փոքրիկ միջատներն յիբուսի մարդկային ազգի մեծ աղետից և հարուածոյ պատճառ պիտի լինէին : Այս միջատներն կու զան ճանձնբու վրայ կը կպչին՝ որոնք կնճկով իրենց մարմինը մաքրելու ժամանակ զանոնք ալ միատեղ կ'որոտան, և գրեթէ գլխաւորապէս անոնցմով կը սնանին :

Նոր օդերէտարարական դիտարան մ'ի Սահրա. — Որչանդ Բոնապարտի խնամքով՝ Սահրայի անապատին Ռեդէ-Հաիթ հովտին մէջ՝ կանգնեցաւ օդերեւութարանական դիտարան մի, պատշաճուած այնպիսի ուղղիչ կոշուած կազմածներով, որոցմով կարելի է իմանալ բարեխառնութեան և ճրնջման աստիճանըը, եկած անձրեւի քանակը, հողմոյ ընթացքին ուղղութիւնը, անոր երազութեան չափը, երկրաշարժի տեւողութեան ժամանակը, և այլն, և այլն. տեղւոյն բարեխառնութեան մեծագոյնն՝ այսինքն է ամենէն ջերմ աստիճանն է՝ 42⁰, 9, և փոքրագոյնն՝ որ է ըսել ցրտագոյն աստիճանն՝ — 4⁰, 4. որ կը ցուցնեն թէ ծայրագոյն կլիմայ մ'է : Այս ամէն դիտողութեանց նպատակն է՝ սահմանել՝ արմատենայ մշակութեան համար կարեւոր եղող ջերմութիւնը :

Կովկասոս աստեղարանական նոր դիտարան. — Ռուսաց ուսումնական վարչութիւնը մօտերս Աբբաս-Թումանի մէջ, 1370 մէտր բարձրութեամբ ծովու երեսէն, առաջին կարգի դիտարան մի կանգնեց, Ռուսաց գործատանց յառաջ բերած ամենէն ընտիր գործիներով պատշաճուած :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ. — Ենթահակութեամբ ստացանք ի Հեղինակաց առ խմբագրութիւնս և մեզ ուղղուած հետեւեալ գրքերը. Ա. — ՕՐՈՒՅԻՆԻՍ ԵՐՈՍՏՐՈՒԹԵԱՆ ԵՄ ԸՆՏԱՆԵՎԱՆ ԻՐԱՌԻՆՔ. Անոսական օրէնք յոյն եկեղեցոյ, մակագրուած հմտական հրատարակութեան Ա. հատորը. գրեց. Պ. Տիմիրչիոս Չօլագեան աջակցութեամբ Սոսիէնեան Ալեասի Էֆենտի : Ի Կ. ՊՈԼՍՈ :